

ՅՈՎԱՆԷՓ ՎՐԴ. ԱՐՑԱԽԵՑԻ

(ԺԸ-ԺԹ դար)

Յոովսէփ Վարդապետ Արցախեցին ԺԸ. դարի վերջի եւ ԺԹ. դարի առաջին երեք տասնամեակների հայ մտաւոր շարժման բազմարդիւն գործիչներից մէկն է: Յաւօք, մեր վերջին շրջափուլի հայագիտութեան գրեթէ անծանօթ է նրա գրական վաստակը: Զարմանալի չէ... քանի որ, նրա ապրած «նարը կրօնական էր»: Միթէ այդ բախտին չե՞ն արժանացել նոյն ժամանակների բազմաթիւ նշանաւոր գործիչներ՝ անկախ այն բանից, թէ նրանք ինչ ծառայութիւն են մատուցել ազգային լուսաւորութեան սուրբ գործին: Միթէ մենք իրաւո՞ւնք ենք ունեցել հրապարակով եւ ըստ արժանւոյն գնահատելու Վենետիկի Ս. Ղազարի հայոց Միաբանութեան հիմնադիր, մեծ լուսաւորիչ Մխիթար Սեբաստացուն, միթէ մենք ճանաչո՞ւմ ենք նոյն ժամանակների Կ. Պոլսի պատրիարք «Համայն ազգի պարծանք», «Գազաթ պետական», աստուածաբան, փիլիսոփայ, ուսուցչապետ, բանաստեղծ, գրուցագիր, բարոյագէտ-հրապարակախօս Յակոբ Նալեանը՝ հանճարեղ Գրիգոր Նարեկացու՝ համաշխարհային քնարերգութեան նոր վերածնունդը ազդարարող «Մատեան ողբերգութեան» երկի առաջին ամբողջական գիտական մեկնութեան հեղինակին: Եւ կամ միթէ մենք ճանաչո՞ւմ ենք էջմիածնի «Լուսաւորական աստղ», երկրորդ «Մատեան ողբերգութեան» «Աղօթական բանք ընդ Աստուծոյ ի խորոց սրտէ...» երկի հեղինակ, աստուածաբան, փիլիսոփայ, մանկավարժ, բանաստեղծ Պետրոս Նախիջեւեանցուն: Միթէ մենք իրաւո՞ւնք ենք ունեցել թէկուզ մի երկտողով յիշատակելու, Տրապիզոնում եւ Ղրիմում հայոց վարժարանների հիմնադիր, գիտնական, մանկավարժ, բարոյագէտ, քերականագէտ, բանաստեղծ, գրուցագիր, ուսական ցարի բացառիկ պարզեմաններին արժանացած Մխիթարեան վարդապետ՝ Մինաս Բժշկեանին... ո՞ր մէկին յիշել...: Այնպէս որ Յովսէփ Վարդապետ Արցախեցու առաւել ուշացած վերածնունդը «բնականոն» երեւոյթ է...:

ԺԸ. դարի հայոց գրական, կրթական, գիտական մտքի պատմութիւնը՝ ներառեալ ԺԹ. դարի շրջանը, վերադնահատելու կարիք ունի: Դա հայ ժողովրդի ազգային նոր եւ ընդհանուր վերանորոգութեան,

զարթօնքի ժամանակաշրջանն է՝ հին եւ միջին դարերի գրական արժէքների իւրացման եւ այդ հիմքի վրայ, պատմագրական երեւոյթների ներքին կապի մէջ, եւրոպական նոր քաղաքակրթութեան ձայնին համահնչուն, հայոց համազգային գրական, գիտական նոր վերելքի ու զարգացման շրջան: «Հաւատք եւ հայրեմիք», «հաւատք եւ լիցում», «կրօն եւ գիտութիւն» - ծրագրային այս նշանաբաններով էին գործում կրօնա-ազգային լուսաւորական շարժման բոլոր նշանաւոր գործիչները՝ սկսած Մխիթար Վրդ. Սեբաստացուց, Յովհաննէս Բաղիչեցուց... «Ձեզ համար գրաբար ֆերականութիւն գրեցի, քանզի անգի աշխարհարար հայերէն պէտք է»¹ դիմում է Մխիթար Սեբաստացին նորավարժ մանկանց: «Մի ազգի պահողն էլ լիցումն ա ու հաւատը, թէ դրանք էլ կորցրինք, վայը եկել ա մեր օրին», գրում է Խաչատուր Աբովեան²: Միայն նպատակադիր, ծրագրային գործընթաց, դա էր հայոց ազգային կեանքի նոր վերածննդի, հայ ժողովրդի յարատեւութեան նախապայմանը... «Միթէ այդպէս չե՞մ արել Սուրբատն ու Կոնֆուցիոսը, գրում է դարձեալ Աբովեան, միթէ մեր Մխիթար Սեբաստացին այդպէս չի՞ դրել ամբողջ գիտական աշխարհում յայտնի Վեներաբիլի այժմեան հսկայական Միաբանութեան հիմքը»³: Ահա պատմական այս ընթացքի, հայոց կեանքի մտաւոր նոր վերածննդի, վերանորոգութեան՝ Սեբաստացուց-Աբովեան ընկած ժամանակահատուածի նշանաւոր գործիչներից մէկն է՝ Յովսէփ Վարդապետ Արցախեցին՝ Թաղիադեանի եւ Աբովեանի ուսուցչի ուսուցիչը՝ գիտնական, աստուածաբան, իմաստասէր, բանասէր, մանկավարժ, ֆերականագէտ, բառարանագէտ, մեկնիչ, տոմարագէտ, թարգմանիչ, հաւաքող-գրիչ: Բազմամասնագիտութիւնը, հանրագիտութիւնը հայոց միջնադարի եւ նոր ժամանակների լուսաւորականներին յատուկ յատկանիշ է: Դա էր թելադրում կեանքը, ժամանակը: Յովսէփ Արցախեցին, այս առումով եւս, իր նախորդների գործի անչեղ շարունակողն է:

* * *

Մեր առաջնահերթ խնդիրն է ներկայացնել Յովսէփ Արցախեցի գիտնական-մանկավարժի կեանքի եւ գործունէութեան ընդհանուր պատկերը, ի մի բերել մատենագիտութեան մէջ նրա մասին եղած սակաւաթիւ տեղեկութիւնները, ներկայացնել նրա ձեռագիր բազմաբնոյթ աշխատութիւնները:

1. Մխիթար Վրդ. Սեբաստացու, Գիրք ֆերականութեան աշխարհարարի, Վենետիկ, 1727, էջ 5:
2. Ա.Բ.Ու.Ս.Ն. Խ., Վերք Հայաստանի, 1958, առաջաբան:
3. Ա.Բ.Ու.Ս.Ն. Խ., Երկեր, հատոր Ե., էջ 340:

Յովսէփ Արցախեցի Տէր Աւագեանը ծնուել է Արցախի Խաչէն գաւառի Ղչլաղ գիւղում: Ծննդեան ստոյգ թուականը մեզ յայտնի չէ: Նրա ձեռագիր աշխատութիւնները մեծ մասամբ պահպանուում են Մեսրոպ Մաշտոցի Մատենադարանի՝ 1804-1850 թուականների գրչագրերում, որոնց մէջ կան նաեւ ինքնագրեր: Կասկածից վեր է, որ նրա ձեռագրերի մի մասն էլ եղել է Շուշիի Յակոբայ Վանքի ձեռագրատանը, որի ճակատագիրը առ այժմ մեզ յայտնի չէ: Ժամանակակից մի յիշատակագրութեան համաձայն, 1823 թուականին Յովսէփ Արցախեցին եղել է ծերունագարդ: Նրա նշանաւոր աշակերտներից մէկը՝ Պօղոս Ղարադաղցին, 1817 թուականին արդէն վարդապետ էր: Կարելի է ենթադրել, որ Յովսէփ Արցախեցին ծնուել է 1760ական թուականներին, կամ 1770ական թուականներին սկիզբներին: Վախճանել է 1843ի Մարտին: Արցախի մետրոպոլիտի դիւանատան վաւերագրերից մէկում պահպանուում են տեղեկութիւններ Յովսէփայ Արցախեցու կեանքի ու մահուան վերջին ժամի մասին. «Յաղագս մահուան Յովսէփայ վարդապետի, վարժապետի սրբոյ վանիցս Գանձասարայ ի յայս ամսոյս Մարտի վերջին, մինչ էին երկու ժամ գիշերին անցելոյ, Հանգեալ վերափոխեցաւ հոգի սուրբ Յովսեփայ վարդապետ վարժապետի առ սուրբ Քրիստոս մեր՝ իւր առաջին եւ նոյն ցաւոյն բանակամ: Հրամայեաց Պաղտասարի մետրոպոլիտն թաղել նորան Գանձասարի հիւսիսային գաւիթում»: Յովսէփ գիտնական վարդապետի Տէր Աւագեանի Արցախեցույ պերճ տապանի վրայ փորագրուած են եղել հետեւեալ չափածոյ տողերը.

Որպէս կարիս Հանդուրժել,
 Մեծն վարդապետն ի քեզ կրթել,
 Զհին աւուրց երախտեացն ամփոփեա,
 Զանխօս մանկունս ի սուրբ հօրէն որբ թողեա.
 Եկայք ընկերք, ո՛հ դուք մուսայք սիրասուք,
 Զհօրս ցմահ յորդ արտասուօք ողբացուք,
 Եթէ Յիսուս զիւր Ղազարոս արտասուաց⁴,

13

այնպէս, ինչպէս Քրիստոսը իր մտերիմ բարեկամ Ղազարոսի մահն է սգում՝ յորդ արտասուքով: Այս տողերը վկայում են թէ ո՛րքան մեծ է եղել գիտնական ուսուցչի եւ վարդապետի վաստակն ու երախտիքը, եւ թէ որքան ծանր է եղել նրա կորուստը ողջ արցախահայութեան համար:

Իսկապէս անգնահատելի դեր է կատարել Յովսէփ Արցախեցին Գանձասարի Ս. Յակոբայ վանքի դպրատան, Շուշիի դպրոցի եւ առհասարակ Ղարաբաղի դպրոցական շարժման պատմութեան մէջ: Ամե-

4. ԼէՕ, Պատմութիւն Ղարաբաղու, Թիֆլիս, 1914, էջ 89: ԲԱՆՈՒՒԴԱՐԵԱՆ ՄԱԿԱՐ, Արցախ, Բագու, 1895, էջ 179: Զափածոյ յիշատակագրութիւնը այս երկու աղբիւրների մէջ ունի տարբերութիւններ:

նայն հաւանականութեամբ Յովսէփ Արցախեցին դասաւանդել է աստուածաբանութիւն, տրամաբանութիւն, քերականութիւն՝ իր իսկ պատրաստած դասագրքերով. «Վանական գիտութեան, ճարտասանութեան, քերականութեան մէջ հմուտ էր, - գրում է Լէոն Յովսէփ Արցախեցու մասին, - նա յայտնի էր նաեւ իր կրօնական օրինակելի կենցաղով... այնպէս որ Շուշու հարուստ եւ ազնուական ընտանիքները իրենց երեխաներին ուղարկում էին Յակոբայ վանքում ապրելու, նրանից դասեր առնելու համար»⁵: Յովսէփ Արցախեցու գիտելիքների եւ նրա բացառիկ անհատականութեան մասին ուշագրաւ տեղեկութիւններ է յայտնում նշանաւոր գրող, հրապարակախօս Մեսրոպ Թաղիադեան, իր «Ճանապարհորդութիւն ի հայս» եւ «Ճանապարհորդութիւն ի Կալկաթա» աշխատութիւններում: Ընթերցողը այն տպաւորութիւնն է ստանում, որ Յովսէփ Արցախեցի գիտնական ուսուցչապետը նշանակալից դեր է կատարել Մեսրոպ Թաղիադեանի կեանքում... Շուշիում Մեսրոպ Թաղիադեան Յովսէփ իմաստասէրի մօտ սովորում է տրամաբանութիւն առարկան: «Ողորմութեամբն Աստուծոյ, վերստին աստ պատահէր Պօղոս իմաստասէր վարդապետն իմ եւ Յովսէփ վարդապետ իմաստասէր վերածայնեալ ուսուցիչ ուսուցչի իմոյ, զոր հրաւիրեալ էին երեւելի գերդաստանք քաղաքիս ի դաստիարակութիւն ուստերաց եւ դստերաց իւրեանցն, ուստի եւ եւս սպրդեցայ ի ուսանիլ զնորոգ եւ զպայծառ տրամաբանութիւն ի Յովսէփայ վարդապետէ իւրում»⁶: Մ. Թաղիադեան յիշում է իր վարդապետի խրատները. «Մի՛ նախանձիր ձայնի եղբարց քոց, նոցա ձայն հազիւ հասանէ ի տունէ ի տուն, ուսիր եւ համբաւ քո հարցէ յաշխարհէ-յաշխարհ...»⁷: Մարգարէ հոգի...: Յիրաւի, Մ. Թաղիադեանի համբաւը տարածուեց աշխարհէ-աշխարհ...:

Մանկավարժական, դպրոցական լայնահուն գործունէութեան հետ միասին՝ Յովսէփ Արցախեցին խորամուխ է եղել գիտութեան եւ աստուածաբանութեան մի շարք ճիւղերի մէջ: Նրա գրչին են պատկանում՝ «Գիրք տեսական փիլիսոփայութեան» հատորները, Յովհան Ոսկերբերանի «Մատթէի մեկնութեան քննութիւնը», «Աստուածաբանութիւն», «Վասն ուղղափառ հաւատոց», «Քերականութիւն Հայկազեան լեզուի», «Գիրք որ կոչի Տետրակ բայի», «Բառարան գրաբարէ աշխարհաբար», «Տումար» եւ ա՛յլ աշխատութիւններ:

Կանխապէս յայտնենք, որ մեզ ուրախացրեց այն փաստը, որ բազմարդիւն մատենագէտ Յովսէփ Արցախեցու մասին ինչ որ չափով տեղեկութիւն է տալիս, «Հայոց հանրագիտարան»ը (հատոր 2., էջ 575)։

5. ԼէՕ, նոյն, էջ 89:

6. ԹԱՂԻԱԴԵԱՆ Մ., Ճանապարհորդութիւն ի Հայս, Կալկաթա, 1847, էջ 245:

7. նոյն, էջ 293-294:

«18րդ դարի վերջի եւ 19րդ դարի առաջին կէսին հայ տրամաբան, մտածող, եղել է Շուշիի թեմի վարժապետ, զբաղուել է մանկավարժութեամբ: Հայ իրականութեան մէջ տրամաբանութեան սինթետիկ ըմբռնման նախակարապետներից մէկն է: Հետեւելով Փրանսացի փիլիսոփայ, բարոյագէտ եւ աստուածաբան Անտոն Կովղէին... գրել է առաջին մասն փիլիսոփայութեան, որ ասի տրամաբանութիւն...»⁸: Յաւոք, Յովսէփ Արցախեցուն, «Հանրագիտարան»ը, ներկայացնում է ոչ ըստ ամենայնի: Ընթերցողը ո՛րեւէ տեղեկութիւն չի՛ ստանում է Յովսէփ Արցախեցու աստուածաբանական, լեզուաբանական, մեկնողական, թարգմանական աշխատութիւնների մասին: Իսկ Հայոց փիլիսոփայութեան պատմութեան մէջ, «Տրամաբանութեան սինթետիկ ըմբռնման նախակարապետներից մէկին» ճանաչման ներկայացնելու դէպքում՝ անհրաժեշտ էր գտնէ ինչ որ չափով ներկայացնել նրա, «Գիրք տեսական փիլիսոփայութեան» ստուարածաւալ աշխատութիւնը: Ինչ վերաբերում է Անտոն Կովղէի «Տրամաբանութեան», ապա Յովսէփ Արցախեցին միայն համառօտել է հեղինակի նոյնանուն աշխատութեան բուն բնագիրը: «Առաջին մասն փիլիսոփայութեան, որ ասի տրամաբանութիւն՝ համառօտեալ ի բուն տրամաբանութեան աստուածաբան վարդապետին Կովղէնոյ, ի 1830 ամի: Աշխատասիրութեամբ Հօր Յովսէփայ գիտնական վարդապետի Տէր Աւագեան Արցախեցոյ, որ է միաբան սրբոյ վանիցն Գանձասարու՝ եղելոյ ի Սաչէն գաւառակին Արցախոյ» (1840, ի Շուշի):

Այս տպագրութեան ձեռագիրը մեզ յայտնի չէ: Բարեբախտաբար Յովսէփ Արցախեցու Մատենադարանում պահպանուող ձեռագրերի զգալի մասը ունեն յիշատակագրութիւններ, ընթերցողին ուղղուած խօսք, որոնք բաւականաչափ գաղափար են տալիս հեղինակի, մեկնաբանի, հաւաքողի առջեւ ծառայած խնդիրների մասին: Երկու հիմնական ծրագրային առաջադրանք է ունեցել գիտնական-մանկավարժը. ստեղծել իմաստասիրական, աստուածաբանական, քերականագիտական, մեկնողական ա՛յլ բնոյթի բազմազան աշխատութիւններ, ներկայացնել այդ գիտութիւնների օրէնքները, հիմունքները, առանձնաշատկութիւնները եւ երկրորդ՝ այդ գիտութիւնները ընթերցող լայն խաւերին, զրագէտ հայերին, աշակերտներին մատչելի դարձնելու նպատակով՝ գրել պարզ, անպաճոյճ, անզարդ լեզուով, «պարզ բանիւ», «դիւրալուր ոճիւ»:

Յովսէփ Արցախեցու մի շարք աշխատութիւններում տեղ գտած չափածոյ երկերն ու յիշատակարանները համոզում են, որ գիտնականը ունեցել է նաեւ բանաստեղծի բնատուր շնորհ: Այսպէս օրինակ «Կրօնագիտութիւն կամ հոգեվարժութիւն քրիստոնէական, ըստ լուսաւոր-

8. Հայոց համրագիտարան, Երևան, 1985, հատոր 2., էջ 575:

չական ուղղափառ դաւանութեան առաքելական եկեղեցւոյ Հայաստանեայց» խորագրով նրա առաջին, մեզ անծանօթ, աշխատութիւնը, աւարտուում է բարոյագիտական հետեւեալ ոտանաւորով՝

Ընկալ սիրով, ո՛վ մտերիմ,
Ըզրոյզն ընծա անոխերիմ,
Ձոր ընձիւղել ի սուրբ սրտէ,
Քոյդ պերճ անուան ես փափաքիմ:

Ձի քո խորհուրդ քաջալերիչ,
Ձիմ ապիկար դրդեաց գրիչ,
Առ թարգմանել զներբողեան,
Աստուածութեան փառաբանիչ:

Մի՛ դժնեսցի միտք քո բարի,
Թէ իմ վաստակ չիք անթերի,
Ըսկիզբն է այս իմոյ քրտանց,
Ձինչ է զարմանք, թէ է թերի:

«Աստուածութեան փառաբանիչ»ը ռուս նշանաւոր բանաստեղծ, գիտնական եւ պետական գործիչ Գ. Ռ. Դերժաւյինն է (1743–1816), որի «Աստուած» խորագրով յայտնի ներբողը Յովսէփ Արցախեցին թարգմանել է հայերէն: Լէոն նկատում է, որ այն հիւսուած է մի վայելուչ եւ գեղեցիկ զրաբարով, որ տալիս է փիլիսոփայական մօտեցումների խոր արտայայտութիւն եւ վկայում է առհասարակ թէ թարգմանիչը գրական լաւ ճաշակ եւ դաստիարակութիւն ունի: Նոյնիսկ Մխիթարեանները կարող էին պարծենալ այդպիսի զրաբարով⁹:

Յովսէփ Արցախեցու գրական-գիտական ժառանգութեան մէջ ձեռագիր ընդօրինակութիւններով աւելի լայն տարածում է գտել «Գիրք տեսական փիլիսոփայութեան» աշխատութիւնը:

Մեսրոպ Մաշտոցի անուան Մատենադարանում պահպանւում է թիւ 6818 ձեռագիրը՝ ընդօրինակուած 1812 թուականին: Դա հաւանաբար հեղինակային օրինակն է, որից 1815 թուականին իր համար ընդօրինակում է Յովսէփ Արցախեցու աշակերտ՝ Մկրտիչ Սարգսեանը. «Յամի Տեառն 1816ումն, գրում է նա, ձեռամբ իմով արտագրեցի սոյն ընտիր օրինակէ վարդապետին իմոյ Յովսէփ գիտնական Արցախեցւոյ, ի վայել իմոյ. տիրացու Մկրտիչ Սարգիսեանիս Կենջեցւոյ»¹⁰:

6818 ձեռագիրը ներկայացնում է Յովսէփ Արցախեցու «Գիրք տեսական փիլիսոփայութեան» առաջին մասը, որ կոչւում է «Տրամա-

9. ԼէՕ, Պատմութիւն Ղարաբաղի հայոց թեմական դպրոցի, էջ 125:

10. Ձեռ. թիւ 6818, թուղթ 90:

բանութիւն» եւ հեղինակը այն դիտում է իբրեւ հաւաքականաշխատութիւն. «Գիրք տեսական փիլիսոփայութեան, որ կոչի Տրամաբանութիւն, հաւաքեալ ի Յովսէփ վարդապետէ Արցախեցոյ, յօգուտ հետեւողաց արտաքին գրոց գիտութեան: Ի հայրապետութեան Աղուանից հանգուցեալ Սիմէօն սրբազան կաթողիկոսին ... ի թուղ փրկչին Յիսուսի 1812 ... եւ Հայոցն 1261: Ի յանապատին, որ մերձ ի Սօկունթլու գիւղն»¹¹:

Գիտնական մանկավարժը խորապէս գնահատելով արտաքին գրոց, գիտութեան կարեւորութիւնը մարդու ինքնաճանաչման, կեանքի եւ հաւատքի, հենց այստեղ միայն Տրամաբանութիւն գրքի առաջաբանում ընթերցողին յայտնում է իր բոլոր նկատառումները: Յովսէփ Արցախեցին առաջին հերթին մատնացոյց է անում հաւատքի տեղը եւ դերը գիտական փիլիսոփայութեան ոլորտում: Այս նկատառումով, ահա նա քննում, մեկնաբանում է Տեսական փիլիսոփայութեան մէջ մտնող այն առարկաները, որոնք առընչւում են էականութեան հետ, կամ հիմք են ծառայում էականութեան համար: Ահա այս նոյն գաղափարը Յովսէփ Արցախեցին հիմնաւորում է նաեւ իր «Գիրք տեսական փիլիսոփայութեան» մի նոր առաւել ծաւալուն եւ չորս բաժիններից բաղկացած աշխատութեան մէջ. առաջին բաժինը՝ «Տրամաբանութիւն՝ լոգիկա», երկրորդը՝ «Բնաբանութիւն, բնախօսութիւն», «Իմաստասիրական իսկաբանութիւն», երրորդը՝ «Իմաստասիրական գիրք, որ ճառի վարուց էականաց», չորրորդը՝ «Համաբնաբանութիւն, մետաֆիզիկա, գիտութիւն էակաների մասին», «որ ճառէ ըստ էականաց»: Յովսէփ Արցախեցին այստեղ եւս իբրեւ աստուածաբան-իմաստասէր՝ քննութեան ենթարկելով փիլիսոփայութեան եւ աստուածաբանութեան առընչութիւնները, նմանութիւններն ու տարբերութիւնները, բնականաբար գալիս է դարձեալ այն եզրակացութեան, որ առանց էականութեան մէջ խորանալու հնարաւոր չէ իւրացնել աստուածաբանութեան հիմունքները: «Ոչ գոյ ինչ կենցաղումս շահաւէտագոյն քան զայն գիտութիւն, որ առաջնորդի մտաց եւ ճանաչել զճշմարտութիւն ընդհանուր էականաց... Օրէն է սսել թէ տրամաբանութիւն է արհեստ արհեստից եւ գիտութիւն գիտութեանց... Զիք ինչ օգտակարագոյն քան զայն գիտութիւն, որ վերժանէ զմիտս մարդոյ ի ճանաչումն ճշմարտութիւն էականաց»¹²: «Այսորիկ աղագաւ, - գրում է նա նաեւ թիւ 8619 ձեռագրի առաջաբանում, - որք ցանկացան ստանալ զաստուածաբանութիւն, հաւատացեալ ընթերցողք, նախ առաջին փոյթ մեծ կալան ի քննութիւն բանական էականաց, ըսդ կարեաց իւրեանց աշխատելով

11. Զեռ. թիւ 6818, թերթ 3ա, թիւ 2990, թերթ 2ա-բ:

12. Զեռ. թիւ 4045, թերթ 3ա, նաեւ ձեռ. թիւ 3619:

եւ յետոյ փութապէս գտին զինքեանս կատարելապէս տեղեկացեալ զաստուածաբանութեան»¹³ :

Ուշագրաւ է նաեւ, որ Յովսէփ Արցախեցին «Գիրք տեսական փիլիսոփայութեան» բոլոր ձեռագրերն ունեն «Տրամաբանութիւն» բաժինը, ուր հեղինակը անուանապէս կամ ոչ-անուանապէս յիշատակում է Տրամաբանութեան առարկայի վերաբերեալ հին եւ միջին դարերի նշանաւոր փիլիսոփաների՝ Արիստոտէլ, Պորփիւր, Պրոկղ, Դաւիթ Անյաղթ, Սիմէոն Ջուղայեցի, Պաղտասար Դպիր, Անտոն Կովղն եւ այլոց հիմնական հայեացքները եւ յայտնում իր վերաբերմունքը համապատասխան ընդհանրացումներով: Անվիճելի է, որ նրա ձեռքի տակ եղել է նաեւ Պաղտասար Դպրի «Տրամաբանութիւն»ը:

Յովսէփ Արցախեցու «Գիրք տեսական փիլիսոփայութեան» աշխատութիւնը բազմաթիւ ընդօրինակութիւններով տարածուել եւ մեծ ուշադրութեան է արժանացել: Մատենադարանի թիւ 2835 ձեռագիրը, ուր դարձեալ ներկայացուած է նրա «Տեսական փիլիսոփայութիւն» երկու մասով ընդօրինակող գրիչը՝ ժամանակակից Գրիգոր Տէր-Աւագեան Նախիջևանցին, թողնում է մի չափածոյ յիշատակարան, ուր իր հիացմունքն է արտայայտում Յովսէփ Արցախեցու «Գիրք տեսական փիլիսոփայութեան» աշխատութեան մասին.

Ի մեզ ոամեալ մանկանց ի ծոց աւազանին,
 Զիս ամօթով ո՛չ կացուցէր շնորհօք քոյին,
 Այլ օգնեցէք ինձ զայս գործս դժուարալի,
 Որ առաւել ջանից եւ կրից ես փոյթ ունի՞¹⁴:

Ամփոփելով մեր խօսքը Յովսէփ Արցախեցու «Տեսական փիլիսոփայութիւն» երկի մասին, թոյլ ենք տալիս ասելու, որ անտիպ այս երկի Մատենադարանում պահպանուող ու ձեռագիր ընդօրինակութիւնները եւ նրանց մասին հեղինակի եւ այլոց արուած գիտական դիտողութիւնները համոզում են, որ այդ աշխատութիւնը սոսկ թարգմանութիւն կամ համառօտագրութիւն չէ: Մասնագիտական խոր ուսումնասիրութիւնը անշուշտ կը պարզի, թէ Յովսէփ Արցախեցու «Գիրք տեսական փիլիսոփայութեան» տարբեր ձեռագրերով մեզ հասած աշխատութիւնը ինչ հարցեր է բարձրացնում, զարգացնում, ո՛րն է հեղինակի «Համառօտեալ» կամ «Հաւաքեալ» կամ «Շարադրեալ» գործերի մէջ իր բաժինը եւ թէ ի՛նչ տեղ ունի մատենագէտ-իմաստասէրը ԺԼ. դարի վերջի եւ ԺԹ. դարի 20-30ական թուականների հայ փիլիսոփայական մտքի պատմութեան մէջ:

Ժամանակագրական կարգով Յովսէփ Արցախեցու յաջորդ աշխատութիւնը ներկայացնում է Մատթէոսի Աւետարանի Յովհան Ոսկե-

13. Զեռ. թիւ 3619, թերթ 12բ:

14. Զեռ. թիւ 2835, թերթ 2ա:

բերանի մեկնութեան քննութիւնը (1817 թ.): Սա ինքնին համարձակ եւ դժուարին գործ է եւ միաժամանակ վկայութիւնը՝ աստուածաբանութեան եւ բնագիտութեան մէջ Յովսէփ Արցախեցու ունեցած բացառիկ կարողութիւնների մասին: Նպատակը նոյնն է: Վերաշարադրել, վերակազմել եւ համառօտել Յովհան Ոսկեբերանի «Մարգարտահատիկ» շուրջ 1500 էջանոց խրթին մեկնութիւնը ընթերցող լայն հասարակութեան դիւրին, օգտակար դարձնելու համար: Յովսէփ Արցախեցին այդ վիթխարածալ մեկնութիւնը բաժանում է վեց մասի, կազմում է իւրաքանչիւր մասի համար համապատասխան ցանկ եւ ապա լրացնում է նաեւ այն մասերը, որոնք չեն բղխում Աւետարանի դրոյթներից. «Ծանիր, ով բարեմիտ ընթերցողասէր, զի զգիրքս զայս, ի վեց մասունս բաժանեցաք եւ իւրաքանչիւր մասանց առընթեր եղաք զպատշաճաւոր ցանգս նոցին. զի բանասէրք ի տարակուսիլ իւրեանց ի վերայ բանին իրիք անաշխատ գտանիցեն եւ լուծցեն զտարակուսութիւն սրտից իւրեանց. Յաւելաք եւ յաւարտ վեցեցուն մասանց զքանի բանից մեկնութեան, որք ոչ գտան համաձայն Աւետարանի Մտթէոսի, արարաք մասն մի եւ զայն»¹⁵:

Յովսէփ Արցախեցին տեսական ուշագրաւ հայեացք է զարգացնում մեկնութեան մասին՝ առհասարակ. մեկնութիւնը պէտք է ծառայի ընթերցողների համար իբրեւ ուղեցոյց: Իբր առաջին աստիճան բարդ բնութագրի վերծանութեան, բացատրութեան. «Եւ յիրակի, - գրում է նա, - զի ո՛չ ոք առանց զտառսն ճանաչելոյ եղեւ յանկարծ ընթերցող գրոց, ո՛չ ոք առանց զներքին աստիճան սանդղոցն կոխելոյ՝ յանկարծ թռանիցի ի վերինն: Նոյնպէս ո՛չ ոք եղեն յանկարծ աստուածաբան առանց յընդերկար ժամանակ հետեւելոյ մեկնութեան գրոց, իբրեւ հարկաւոր մասն նորա...: Ջոբ օրիմակ, - շարունակովմ է աստուածաբան մանկավարժը, - որպէս մարդս առանց բանական հոգւոյ ոչ է մարդ, նոյնպէս եւ աստուածաբանութիւն առանց մեկնութեան գրոց ոչ է աստուածաբանութիւն»¹⁶: Յովսէփ Արցախեցին բանասիրական, գիտահամեմատական այս ծանր աշխատանքը կատարելիս՝ յատուկ ուշադրութիւն է դարձնում նաեւ լեզուի, ոճի վրայ, ոճի գեղեցկութիւնը, խրթնաբանութիւնը այս պարագաներում աննպատակային է. «Զի հաւաքեալ մեր գրանս մեկնութեան, ամենեւին անփոյթ եղաք զգեղեցկութեան ոճոյն, քանզի դիտաւորութիւն մեր ոչ էր ընթացիցն շարադրութեան գեղեցիկ լինիլ, այլ միայն ընթերցողացն շահել գրան մեկնութեան: Այլ ստոյգն կամելով ասել՝ ես ոչ կարեւոր վարկանիմ լայն մեկնութիւն, որոյ ոճն գեղեցիկ իցէ, քան գրանիցն իմաստս:

15. Զեռ. թիւ 3618, թերթ 2ր:

16. Զեռ. թիւ 3618, թերթ 3ր:

Վասն զի ծառոցն պտուղքն պարտին յամախ լինիլ, քան գտերեսն, իսկ ծառք տերեսագուրկ չունելով գպտուղ չեն ինչ կարի վայելուչք»¹⁷:

Յովսէփ Արցախեցու գիտական-աստուածաբանական բնոյթի յաշորդ աշխատութիւնը կրում է «Գիրք, որ կոչի վահան ուղղափառաց» խորագիրը: Այն ունի երեք բաժին. առաջինը՝ «Բանք զաւանդութենէ պահոց» կամ «Յաղագս պահոց», երկրորդը՝ «Ճշմարտութենէ ամենայն սրբոց հնոց եւ նորոց» կամ՝ «Յաղագս բարեխօսութեան» եւ երրորդը՝ «Զընդունելութենէ եւ զկերպագրութենէ պատկերաց, հաստատեալ վկայութեամբ Աստուածաշունչ սուրբ գրոց» կամ՝ «Յաղագս պատկերասիրութեան եւ պատկերատեսցութեան»: Յովսէփ Արցախեցու այս աշխատութիւնը իր փաստական նիւթով եւ տեսական եզրայանգումներով շատ օգտակար սկզբնաղբիւր կարող է լինել մեր օրերի կերպարունեստի պատմութեամբ եւ ազգագրութեամբ զբաղող մասնագէտների համար: Ներթափանցելով Աստուածաշունչի եւ Աւետարանների (յատկապէս Մատթէոսի աւետարանին) բարոյագիտական հիմքերը, Յովսէփ Արցախեցին յանգում է այն ճշմարիտ եզրակացութեան, համաձայն որի քրիստոնէական առաքելական, ուղղափառ հաւատքի բարոյական չափերի մէջ չկան վերացական, չհիմնաւորուած դրութիւններ եւ որ իւրաքանչիւր խորհուրդ բխում է կեանքից, մարդկային հասարակութեան դարերի կենսական փորձից եւ նպաստում նրա բարորութեանը: Այսպէս օրինակ, ըստ Յովսէփ Արցախեցու պահքը (պասքը) հոգեկան եւ մարմնական հասկացութիւնների միասնութիւն է եւ որ առաջին պահք պահողը՝ Քրիստոսը նոյն ըմբռնումն է ունեցել: Առհասարակ, գրում է Յովսէփ Արցախեցին, - «զի ուր իցէ հոգի մարդոյ, ի հարկէ անդ լինի կամ գործողութիւն քարեգործութեան եւ կամ գործողութիւն մոլորութեան: Միայն այսքան պարտիմք իմանալ, թէ ուղղափառք ո՛չ միայն պարտական են ետ պահել զինքեանս ի մտեղէն, յիւղեղէն կամ այլ յոյժ մարմնոյ զօրացուցիչ կերակրոց եւ կամ մերձաւորութեան ամուսնական գործողութեան կանանց, այլ եւ ընդ նոսին շարունակաբար պահել պարտին զինքեանս՝ ի հպարտութենէ, ի նախանձութենէ, յոխակալութենէ, յազահովթենէ, ի բամբասանաց, յանշահ բարկութենէ եւ այլք»¹⁸: Ուրեմն, քառասուն օրուան պահքը (երբ մարդիկ ուտում են ո՛չ թէ միս, իւղ, այլ՝ ոսպ, լոբի, բանջար․․․), նաեւ մարդու մէջ առաքինութիւնների արմատաւորման, բարոյական կատարելութեան միջոց է: Այս բաժինը համեմուած է նաեւ աստուածաշնչային, աւետարանական համապատասխան զրոյցներով: (Յատկապէս Քրիստոսի եւ իր աշակերտների պահքի օրերի մասին եւ այլն): Երկրորդ բաժինը վերաբերում է քրիստոնէայ ուղղափառ ազ-

17. Զեռ. Թիւ 3618, Թերթ 4ա: Նոյնը տե՛ս Թիւ 3620 ձեռագրում:

18. Զեռ. Թիւ 2622, Թերթ 27ա:

զերի՝ հայերի, ռուսների, լատինական ժողովուրդների եկեղեցիների փոխադարձ կապի եւ ընդհանրութիւնների, նրանց բարոյախօսական ծէսերի, արարողութիւնների հարցերին, իսկ երրորդ բաժնում՝ «Յաղագս պատկերասիրութեան եւ պատկերատեսցութեան» խորագրի տակ, քննադատում է կուսպաշտներին, հեթանոսներին, աղանդաւորական այս շերտերին, որոնք անհիմ կերպով մերժում են քրիստոնէական ուղղափառ եկեղեցու պատկերապաշտութեան եւ պատկերատեսցութեան այս հարցը, որ բարձրացնում է Յովսէփ Արցախեցին, կրկին անգամ համոզում է, որ դեռեւս Ե. դարից սկիզբ առած ու վաղ միջնադարում եւ ուշ միջնադարում իր գոյութիւնը բացայայտօրէն զգացնել տուող աղանդաւորական շարժումները գոյատեւում են մինչեւ ժժ. դարի սկիզբները: Այդ մենք տեսանք Մատենադարանի վերջին գիտական նստաշրջանում ընթերցուած «Թողալեան շարժումը Գրիգոր Նարեկացու գնահատութեամբ» զեկուցման մէջ: Յովսէփ Արցախեցին պատկերատեսցութեան զաղափարակիրներին կոչում է կուսպաշտներ, հերձուածողներ, լութերականներ, այսինքն քրիստոնէական ուղղափառ հաւատքից շեղուած աղանդաւորներ:

Յատուկ ուսումնասիրութիւն է անհրաժեշտ բացայայտելու այն դերը, որ ժամանակին կատարել է Յովսէփ Արցախեցին իր քերականագիտական ու բառարանագիտական աշխատութիւններով: Նրա տպագրուած միակ աշխատութիւնը, «Բառարան գրաբարից աշխարհաբար» գիրքն է (Շուշի, 1830):

Գ. Կ. Գասպարեան 1969 թուականին տպագրում է իր «Ժժ. դարի հայ բառարանագիտութեան պատմութիւն» 560 էջանոց ստուարածաւալ աշխատութիւնը եւ հազիւ թէ մի պարբերութեամբ յիշում է Յովսէփ Արցախեցուն: Ժժ. դարի առաջին տասնամեակներում, - գրում է նա, - «Բառարանագիտութիւնը ենթարկուել էր բացառապէս ռուսական ուղղութեան»: Այս առումով բացառութիւն է Յովսէփ Արցախեցու «Համառօտ բառգիրք գրաբարէ աշխարհաբար ի պէտս համբակաց» գիրքը, որ պարունակում է 12 հազար բառայօդուած՝ գրաբարից աշխարհաբար: «Յովսէփ Արցախեցու «Բառարանը», գրում է Գասպարեան, ինքնին վկայում է, որ ժժ. դարի 30ական թուականներին գրաբար լեզուն արդէն հեռացել էր իր կենդանի խօսակցական լեզուից, աշխարհաբարը իշխող էր եւ պահանջ էր զգացւում բացատրութեան»¹⁹: Անշուշտ այս ընդհանրացումը ճիշտ է, թէեւ պէտք է նշել, որ գրաբար ժողովրդի խօսակցական լեզու չի եղել եւ գրաբարից աշխարհաբար գրականութեան զարգացումը հայոց կեանքում սկսել էր աւելի վաղ շրջանից, պէտք չէ մոռնալ միջին հայերէնը... իսկ ԺԼ-ԺԹ դարերում

19. ԳԱՍՊԱՐԵԱՆ Գ. Կ., Հայ բառարանագրութեան պատմութիւն, Երեւան, 1968, էջ 189:

պարզ զրաբարով եւ աշխարհաբարով էին հիւսուած իրենց գիտական, գեղարուեստական արձակ ու չափածոյ աշխատութիւնները բոլոր լուսաւորականները՝ Մխիթար Սեբաստացին, Պաղտասար Դպիրը, Յարութիւն Էսքերճեանը, Կոմիտաս Քէօմուրճեանը, Յակոբ Նալեանը, Պետրոս Լափանցին եւ այնուհետեւ ժԹ. դարի առաջին տասնամեակների գործիչները, ներառեալ Խաչատուր Աբովեանը, այնպէս որ ժԹ. դարի հայերէն, ռուսերէն, զրաբար, աշխարհաբար բառարանների եւ քերականութիւնների առատութիւնը բացատրուած է պատմական այն իւրայատուկ շրջանով, որ կոչուած է անցման շրջան: Կամ հայոց նոր եւ նոր ընդհանուր վերանորոգութեան վերջին շրջանը:

Այդ նոյն իրադրութեան ծնունդն է նաեւ Յովսէփ Արցախեցու քերականական աշխատութիւնները՝ «Քերականութիւն Հայկազեան լեզուի» եւ «Գիրք որ կոչի Տետրակ բայի ի պէտս համբալաց»: Եթէ առաջինը բացատրութիւն էր ժԼ. դարի եւ ժԹ. դարի առաջին տասնամեակներէ համար եւ լրացնուած է արդէն հրապարակի վրայ եղած մատչելի զրաբար լեզուով հիւսուած քերականութեան դասազրքերի շարքը (Մ. Սեբաստացի, Պաղտասար Դպիր, Միքայէլ Չամչեան, Արսէն Բագրատունի եւ այլք), ապա երկրորդը իր նմանը չունեցող քերականական ձեռնարկ է: 184 ձեռագիր էջից բաղկացած այս գիրքը նուիրուած է միայն բային, «Գիրքս այս կոչի Տետրակ բայի ի պէտս համբալաց, աշխատասիրութեամբ Տեառն Յօսեփայ Արցախեցոյ գերիմաստ վարդապետի ի միաբանութենէ վանիցն սրբոյն Յակոբայ»: Բովանդակութիւնը ներկայացուած է վեց բաժինների մէջ 1. Յաղագս նախադրութեան 2. Յաղագս մակբայի 3. Յաղագս շղկապի 4. Յաղագս միջարկութեան 5. Յաղագս խնդրութեան բայի 6. Յաղագս չէզոքական բայի:

Ուշագրաւ է, որ «Յաղագս չէզոքականութեան բայից» բաժնի վերջում Յովսէփ Արցախեցին աշակերտներին ուսուցանում է հայկական թուանշանների գրութեան ձեւը՝ ըստ Մեսրոպեան այբուբանի. «Թուանշանք եմ տասն, - գրում է նա, - Ա, Բ, Գ, Դ, Ե, Զ, Է, Ը, Թ, Ժ... «0 ըստ ինքեան ոչինչ ցուցանէ, այլ յարեալ ընդ այլ թուանշանքն առաւելու նշանակութիւն նոցա» բերում է օրինակներ. «Թուանշան մի մի եղեալ, - բացատրում է նա աշակերտներին, - ասին միաւոր, իսկ մինչ հարին միմեանց՝ փոխեն զչափ նշանակութեան»: Այնուհետեւ բացատրում է, թէ «Ի՞նչ է միաւոր», «Ի՞նչ է հարիւրաւոր» «հազարաւոր», «տասն հազարաւոր» եւ այլն: Առաւել զնահատելին այն է, որ գիտնական-մանկավարժը երեխաներին բազմակողմանի գիտելիքներ տալու նպատակով, քերականութեան օրէնքները, սահմանումները, բանաձեւերը բացատրելիս համեմուտ է հայ ժողովրդի հոգեւոր եւ իմացական դարաւոր կեանքի հին ու նոր օրինակներով, պատմութեան, գիտութեան, կենցաղի, նիստ ու կացի, տեղագրական, աշ-

խարհագրական միջավայրի, հայոց հեթանոսական եւ քրիստոնէական շրջանների կրօնական եւ իշխանական դասերի նշանաւոր ներկայացուցիչների կեանքի ու գործի հետ կապուած եւ այլն. բացի դրանից, յաճախ բացատրութիւնները տալիս է նաեւ Արցախի բարբառով: Վերջում աչակերտների միտքը սրելու նպատակով ներկայացնում է հանելուկատիպ արձակ ու չափածոյ վարժութիւններ. յիշենք երկու օրինակ՝ երկու եւ երեք վանկանի բառերի բացատրութեան...

Մաղեմ՝

Մասն առաջին է մի գործի,
Որով ալիւրն ի դաշտ հոսի,
Մասն երկրորդ՝ բայ էական,
Եղանական սահմանական:

Խաչեցիմ

Վանկն առաջին՝ Գրիստոսի փայտ,
Վանկն երկրորդ՝ հնգեակն է այդ,
Վանկն երրորդ՝ է լիրբ թռչուն,
Որսիկ առնող, ձագանց հաւուն²⁰:

* * *

Յովսէփ Արցախեցին թողել է հարուստ, բազմաբովանդակ գիտական ժառանգութիւն: Նրա աշխատութիւնները մեզ հասել են ձեռագիր օրինակներով, որոնք առ այսօր չեն ուսումնասիրուել: Առանց Յովսէփ Արցախեցու իմաստասիրական, աստուածաբանական, մեկնողական, քերականական, լեզուագիտական, ազգագրական աշխատութիւնների՝ թերի կը լինեն մեր պատկերացումները ԺԼ. դարից ԺԹ՝ դարը թեւակոխող շրջանի հայոց գիտական մտքի եւ մանկավարժութեան պատմութեան վերաբերեալ:

Յոյս յայտնենք, որ այսուհետեւ մասնագիտական, հանգամանալից ուսումնասիրութեան կ'ենթարկուեն բազմավաստակ գիտնականի, անխոնջ մանկավարժի գործունէութիւնը, եւ նրան իր արժանի տեղը կը յատկացուի հայոց պատմութեան, փիլիսոփայութեան, լեզուաբանութեան, արուեստագիտութեան եւ ա'յլ գիտութիւնները ներկայացնող բազմահատորեակներում, նրա մասին կը ստեղծուեն աւարտաճառեր, մենագրութիւններ եւ ըստ արժանւոյն կը յաւերժացուի Յովսէփ Վրդ. Արցախեցու անունն ու արժանիքը:

ՇՈՒՇԱՆԻԿ ՆԱԶԱՐԵԱՆ